ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Հ. Ա Բ Ր Ա Հ Ա Մ Յ Ա Ն Ի Ն

Հ ա ղ ո ր դ ո ւ մ

Հայաստանի Հանրապետության դատախազության 2010 թվականի գործունեության մասին

Ազգային ժողովի մեծարգո նախագահ

Հայաստանի Հանրապետության դատախազությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, 2010թ. ընթացքում որոշակի աշխատանքներ է կատարել հանցավորության կանխարգելման, հանցագործությունների բացահայտման, քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության, դատարանում մեղադրանքի պաշտպանության, պետական շահերի պաշտպանության հայցեր հարուցելու, հետաքննության և նախաքննության, ինչպես նաև պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության և դատախազական գործունեության մյուս ոլորտներում: Գործունեության առավել կարևորություն ներկայացնող հարցերով կատարվել են ուսումնասիրություններ և վերլուծություններ, որոնց արդյունքները քննարկվել են դատախազության կոլեգիայի նիստերում և խորհրդակցություններում:

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված գործառույթներին համապատասխան, աշխատանք է կատարվել մարդու, սեփականության, տնտեսական գործունեության դեմ ուղղված, ընդհանուր բնույթի, զինվորական, կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների բացահայտման, քննության որակի ու արդյունավետության բարելավման, դիմումների քննարկման, կազմակերպական-վերահսկողական, միջազգային համագործակցության և այլ ոլորտներում:

2010թ. գրանցվել է հանցագործության 15477 (2009թ.՝ 14339) դեպք, այսինքն՝ դեպքերն ավելացել են 1138-ով, աճը կազմել է 7,9%: Արձանագրված դեպքերից բացահայտվել է 12221-ը,

2227-ը չի բացահայտվել (2009թ.՝ 10989 դեպքից չի բացահայտվել 2383-ը): 2010թ. բացահայտման միջին հանրապետական տոկոսը կազմել է 84,6% (2009թ.՝ 82,9%):

2010թ. 230 դեպքով կամ 7,2%-ով աճել են **մարդու դեմ ուղղված հանցագործությունները** (3432-3202)՝ կազմելով արձանագրված հանցագործության դեպքերի 22%-ը: Ընդ որում, աճել են ծեծի (1029-1378), սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների (73-82) (բացառությամբ բռնաբարության և բռնաբարության փորձի) դեպքերը (10-16): Նվազել են սպանության (68-42), սպանության փորձի (29-24), առողջությանը վնաս հասցնելու (1436-1353), նաև դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս հասցնելու դեպքերը (181-167): Հանցագործությունների բացահայտումը կազմել է 96 % (2009թ.՝ 95,6%):

Աճել է սպանությունների (66%-71,4%), դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս հասցնելու (81%-83%), սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների (94,5%- 97,5%) բացահայտման ցուցանիշները: Նվազել են սպանության փորձերի (90%-87,5%) բացահայտման ցուցանիշները: Բացահայտման ցուցանիշներում դրական միտումներ են արձանագրվել նաև վարույթում քննված սպանությունների վերաբերյալ քրեական գործերով (66,2%-73,2%), իսկ սպանության փորձերի վերաբերյալ գործերով, ընդհակառակը, նվազում է արձանագրվել (89,7-88,9%):

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների կտրվածքով երկրի հանցավորության վիճակի հանգամանալից վերլուծությունը ցույց է տվել, որ թե՛ այս բնույթի հանցագործությունների առանձին տեսակների աճը, թե՛ դրանց նվազումը պայմանավորված է անհատական, սոցիալական, իրավական, կազմակերպական բնույթի բազմաթիվ գործոններով: Մասնավորապես՝ ծեծի և առողջությանը թեթև վնաս պատճառելու դեպքերի աճը որոշակիորեն պայմանավորված է ՀՀ ոստիկանության մարմինների կողմից հանցագործությունների հաշվառման, գրանցման գործընթացի բարելավմամբ, այդ հանցագործությունների լատենտայնության նվազմամբ: Վերջին պատճառը հատկապես բնութագրական է սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի աճին, քանի որ նշված հանցատեսակները աչքի են ընկնում առավել բարձր լատենտայնությամբ: 2009թ. այդ հանցատեսակների քննության նկատմամբ դատախազական հսկողության վիճակի առավել խորը ուսումնասիրությունը, այդ հարցով ՀՀ դատախազության կոլեգիայի քննարկման արդյունքները հրապարակելը, այդ նպատակով կազմակերպված շահագրգիռ կառույցների, հասարակական կազմակերպությունների հետ համատեղ քննարկումները որոշակի դրական արդյունք տվեցին այդ հանցագործությունների վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացման, հետևապես՝ լատենտայնության նվազման առումով:

2010թ. արձանագրվել է սպանության 42 (2009թ.՝ 68) դեպք, որից 12-ը չի բացահայտվել (բացահայտումը կազմել է 71,4 %), և սպանության փորձի՝ 24 (2009թ.՝ 29) դեպք:

2010թ. արձանագրվել է դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու 167 (2009թ.՝ 181) դեպք, նվազումը կազմել է 7,7%:

2010թ. դատախազական հսկողություն է իրականացվել մարդու դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստված 9745 նյութի նկատմամբ, որը 446-ով կամ 4,8 %-ով ավելի է նախորդ տարվանից:

2010թ. նախապատրաստված 9745 նյութից 906-ով կամ 9,3 %-ով հարուցվել է քրեական գործ:

2010թ. մարդու դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ հարուցված և վարույթը ավարտված 830 (2009թ.՝ 867) քրեական գործի նկատմամբ իրականացվել է դատախազական հսկողություն, որոնցից 435-ը կամ 52,4%-ը՝ 547 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան, 376-ի (2009թ.՝ 360) կամ 45,3 %-ի (2009թ.՝ 41,9%) վարույթը կարճվել է, 184 (2009թ.՝ 223) քրեական գործի վարույթը կասեցվել է:

2010թ. որոշակի աշխատանք է կատարվել թրաֆիքինգի դեմ իրականացվող պայքարի արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Այդ բնագավառում հսկողություն է իրականացվել ՀՀ քր. օր.-ի 132 և 132.1 հոդվածներով հարուցված 13 (2009թ.՝ 20) քրեական գործի նախաքննության նկատմամբ, որոնցից 4-ը 6 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան՝ 2-ի

վարույթները կասեցվել են, 3-ը միացվել է այլ քրեական գործերի, 4-ի նախաքննությունը շարունակվում է: Նշված գործերով մեղադրվել է 9 կին:

2010թ. մեղադրական եզրակացությամբ դատարաններ են ուղարկվել մարդու դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ 435 (2009թ.՝ 486) քրեական գործ 547 (2009թ.՝ 577) անձի վերաբերյալ: Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ նույն բնույթի 19 (2009թ.՝ 17) քրեական գործ է ուղարկվել դատարան: Դատարան ուղարկված քրեական գործերը կազմել են ավարտված քրեական գործերի 52,4%-ը (2009թ.՝ 58,1%):

2010թ. դատական քննությունն ավարտված 472 (2009թ.՝ 519) քրեական գործով՝ 579 (2009թ.՝ 445) անձի վերաբերյալ մեղադրանք է պաշտպանվել, որից 389-ով (2009թ.՝ 384) կամ 82.4%-ով (2009թ.՝ 86,2%) 443 անձ դատապարտվել է, 19 գործով 19 անձի նկատմամբ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, 1 գործով 2 անձ արդարացվել է, իսկ 78 (2009թ.՝ 76) անձի վերաբերյալ 63 (2009թ.՝ 61) գործի վարույթ դատարանի կողմից կարճվել է:

2010թ. մարդու դեմ ուղղված հանցագործություններով դատապարտվել է 37-ով ավելի անձ:

2010թ. դատապարտված 480 անձանցից՝ 263-ը կամ 55 %-ը դատապարտվել է ազատազրկման, որից 9 (2009թ.՝ 11) անձ դատապարտվել է ցմահ ազատազրկման, 125-ը կամ 26 %-ը՝ տուգանքի, 13-ը կամ 2.7 %-ը, 79-ի կամ 16.4 %-ի նկատմամբ ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածով սահմանված կարգով պատիժը պայմանական չի կիրառվել, 12-ի կամ 4.5 %-ի նկատմամբ կիրառվել է ՀՀ քր. օր.-ի 64-րդ հոդվածը:

2010թ. 13.3%-ով նվազել է ազտազրկման դատապարտվածների թիվը, դրա փոխարեն 10.7%-ով աճել է տուգանքի, 1.2%-ով՝ կալանքի դատապարտվածների թիվը:

2010թ. դատաքննությունն ավարտված գործերով մարդու դեմ ուղղված հանցագործությունների հետևանքով պետությանը պատճառվել է 2.586.000 (2009թ.՝ 313010) վնաս:

2010թ. արձանագրվել է **սեփականության դեմ ուղղված հանցագործությունների** զգալի՝ 186 դեպքով կամ 3,3%-ով նվազում (5392-5578): Դեպքերի նվազմանը զուգահեռ, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման գործընթացում արձանագրվել է չնչին դրական փոփոխություն՝ բացահայտման ցուցանիշը բարելավվել է 2,5%-ով՝ կազմելով 71% (2009՝ 68,5%):

2010թ. գրանցված 14448 հանցագործության դեպքերի զանգվածում անձնական գույքի հափշտակությունների 4627 դեպքի տեսակարար կշիռը 32% է, իսկ սեփականության դեմ ուղղված հանցագործություններինը՝ 85,8%: Սակայն, ինչպես սեփականության դեմ ուղղված հանցագործությունների, այնպես էլ անձնական գույքի հափշտակությունների մասով, հանցավորության շարժընթացում տեղի է ունեցել 328 դեպքով կամ 6,6%-ով (4627-4955) նվազում, 69,3% (2009՝ 67,1%) բացահայտման ցուցանիշով, բացառությամբ բնակարանային գողության դեպքերի, որոնց շարժընթացում արձանագրվել է զգալի աճ՝ 17%-ով կամ 168 դեպքով:

Գողությունների վերաբերյալ գործերով գողոնի հայտնաբերման և գողության դեպքերի հաջող բացահայտման գրավականներից է օպերատիվ-հետախուզական աշխատանքների արդյունավետ իրականացումը ապրանքների իրացման տարբեր վայրերում: Սակայն, իրացման վայրերից, որպես կանոն, դեպքեր գրեթե չեն բացահայտվել կամ էլ բացահայտումները եղել են տուժողների ակտիվ միջամտության շնորհիվ ու նրանց նախաձեռնությամբ, երբ նրանք են հայտնաբերել հափշտակված արժեքները կամ առարկաները:

Բնակարանային գողության դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գողության դեպքերի ընդհանուր թվաքանակի մեջ գերակշռում են այն դեպքերը, երբ միևնույն անձը կամ հանցավոր խումբը, ունենալով հանցավոր անցյալ, իր գործունեությամբ, ապրելակերպով, կապերով, հակումներով հաճախ դուրս մնալով օպերատիվ հետաքրքրության ոլորտից, ոստիկանության տեսադաշտից, անարգել կատարել է բազմաթիվ գողություններ, որոնց զգալի մասը ոստիկանությունում անգամ գրանցված չի եղել: Որևէ դեպքով բացահայտվելուց հետո միայն նշված խմբերը դադարեցրել են իրենց հանցավոր գործունեությունը:

Միաժամանակ, դեռևս շարունակվում է կատարված հանցագործությունների մասին ոստիկանության մարմիններում քաղաքացիների հաղորդումների չգրանցման և հանցագործության դեպքերը հաշվառումից թաքցնելու արատավոր երևույթը, որի վերաբերյալ համապատասխան հաղորդում է ուղարկվել ՀՀ ոստիկանության պետին:

2010թ. արձանագրվել է ավազակային հարձակման 28,4%-ով կամ 43 դեպքով նվազում (108-151)՝ միաժամանակ բացահայտման ցուցանիշների 67,3% (2009՝ 54.3%) բարելավմամբ:

2010թ. գրանցված կողոպուտի դեպքերը նվազել են ընդամենը 16-ով (249-265)՝ բացահայտման ցուցանիշների չնչին բարելավմամբ՝ 64,7% (2009՝ 63%): Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ որպես կողոպուտի առավել տարածված ձևեր շարունակում են մնալ բջջային հեռախոսների և անձանց վրայից ոսկյա զարդերի բացահայտ հափշտակումը, որոնց նախականխման և դեպքերի բացահայտման նպատակով ոստիկանության մարմինների համապատասխան ծառայությունները պետք է ակտիվ միջոցառումներ իրականացնեն մարդաշատ վայրերի, մասնավորապես՝ շուկաների, տոնավաճառների, ավտոկանգառների տարածքներում:

2010թ. արձանագրվել է խարդախությամբ գույքի հափշտակության դեպքերի աճ 124-ով կամ 16,8%-ով (862-738): Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դեռևս շարունակվում է քաղաքացիաիրավական վեճերի վերաբերյալ դատական ատյաններում քննված գործերի արդյունքներից դժգոհ մնացած քաղաքացիների կողմից ներկայացված դիմումների հիման վրա նախապատրաստված նյութերով, ինչպես նաև խարդախությամբ մանր չափերով հափշտակության վերաբերյալ ակնհայտ անհիմն քրեական գործերի հարուցման արատավոր երևույթը, որոնք դատական հեռանկար չեն կարող ունենալ և քննության արդյունքում կարճվում են հանցակազմի կամ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ: Նշված երևույթները վկայում են դատավարական ղեկավարների կողմից նյութերի նախապատրաստման և քրեական գործերի նախաքննության օրինականության նկատմամբ ոչ պատշաճ դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում իրականացնելու մասին:

2010թ. արձանագրվել է <u>տնտեսական գործունեության դեմ ուղղված</u> գրանցված հանցագործությունների աճ 200 դեպքով կամ 28,7%-ով (896-696), բացահայտումը կազմել է 85,3% (2009՝ 79%):

2010թ. տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններից նվազել է կեղծ փողեր պատրաստելու, պահելու կամ իրացնելու դեպքերի թիվը՝ գրանցվել է 94 (2009՝ 136) դեպք, որոնցից բացահայտվել է ընդամենը 3-ը կամ 3,2%-ը (2009՝ 19,9%):

Նշված հանցագործությունների շարժընթացում արձանագրված փոփոխությունը պայմանավորված է ինչպես դրանց հայտնաբերմանն ուղղված օպերատիվ-հետախուզական միջոցառումների ցածր արդյունավետությամբ, այնպես էլ այդ հանցագործությունների գրանցման, հաշվառման և քրեական գործերի հարուցման գործընթացի մշակված խմբավորման հանգամանքով, որի համաձայն՝ կեղծ փողեր պատրաստելու, պահելու կամ իրացնելու դեպքերը խմբավորվել են ըստ դրոշմման և ձուլման եղանակների:

2010թ. մաքսանենգության դեպքերն աճել են 49-ով կամ 68,1%-ով՝ գրանցվել է 121 (2009՝ 72) դեպք, որոնց բացահայտումը կազմել է 87,9% (2009՝ 84,9%): Չնայած արձանագրված աճին, նշված ցուցանիշը պետք է համարել դրական, քանի որ այն պայմանավորված է ոչ թե այդ բնույթի հանցագործությունների թվաքանակի, այլ հանցագործությունների հայտնաբերման դեպքերի աճով, ինչն էլ, իր հերթին, պայմանավորված է ՀՀ ԿԱ ՊԵԿ համապատասխան ծառայությունների կողմից ձեռնարկվող միջոցառումների արդյունավետության բարձրացմամբ և վարչարարության խստացմամբ:

Դրան զուգահեռ, ՀՀ ԿԱ ՊԵԿ համապատասխան ծառայությունների կողմից իրականացված միջոցառումների ոչ բավարար մակարդակի մասին են վկայում ապօրինի կամ կեղծ ձեռնարկատիրության դեպքերի շարժընթացի վերաբերյալ վիճակագրական տվյալները, որոնց համաձայն՝ հիշյալ բնույթի դեպքերը նվազել են 8-ով կամ 9%-ով, գրանցվել է նման հանցագործությունների 80 (2009՝ 88) դեպք:

Նշված դեպքերի հայտնաբերման և բացահայտման արդյունավետության գրավականը քննչական ու օպերատիվ մարմինների պատշաճ փոխհամագործակցությունն է, ինչը, սակայն, ոչ միշտ է ապահովվում:

Այդ նպատակով առանձնահատուկ կարևորվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի և ոստիկանության համապատասխան ծառայությունների միջև ինֆորմացիոն բազայի փոխադարձ մատչելիությունը, որի ուղղությամբ ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ:

2010թ. նախապատրաստված 7210 նյութից 3361-ով հարուցվել է քրեական գործ, 2390 նյութով քրեական գործ հարուցելը մերժվել է, 962 նյութ ուղարկվել է ըստ ենթակայության, իսկ 491-ը մնացել է անավարտ:

2010թ. քննված սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ քննված 4748 քրեական գործից 513-ը կամ 11%-ը փոխանցվել է նախորդ տարվանից, իսկ 4235-ը վարույթ է ընդունվել հաշվետու ժամանակահատվածում: Քրեական գործերից 1282-ի կամ 27%-ի նախաքննությունն ավարտվել է: Ավարտված գործերից 292-ի կամ քննված քրեական գործերի 6%-ի վարույթը կարճվել է: 977 գործ, կամ քննված գործերի 20,5%-ը՝ 1370 անձի նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, իսկ 13 գործով նույնքան անձինք դատարան են ուղարկվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդությամբ: Քննված քրեական գործերի 46,6%-ի կամ 2211 քրեական գործի վարույթ կասեցվել է՝ 2063-ը հանցագործություն կատարած անձը հայտնի չլինելու, իսկ 145-ը՝ մեղադրյալի քննությունից թաքնվելու հիմքով: 213 քրեական գործ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 533-ը միացվել է, իսկ 509-ը մնացել է անավարտ:

2010թ. մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ 977 գործ՝ 1370 անձի նկատմամբ:

2010թ. դատարաններում քննվել է սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ 895 գործ 1277 անձի վերաբերյալ, որոնցից 771-ը կամ 62,9%-ը՝ ազատազրկման, 66-ը կամ 5,4%-ը՝ տուգանքի, 384-ի կամ 31,4%-ի նկատմամբ նշանակված պատիժները պայմանականորեն չեն կիրառվել և սահմանվել է փորձաշրջան, 17-ի կամ 1,4%-ի նկատմամբ պատիժ է նշանակվել ՀՀ քր. օր-ի 64-րդ հոդվածի կիրառմամբ, իսկ 14-ի կամ 1,1%-ի նկատմամբ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոց: Դատապարտվածներից 90-ը կամ 7,3%-ը պատժից ազատվել է համաներման ակտի հիման վրա:

2010թ. սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով պետությանը պատճառվել է 364498475 դրամի նյութական վնաս, որից վերականգնվել է 121975797 դրամ:

2010թ. **<u>ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող գործերով վարչությունը</u>** հսկողություն է իրականացրել ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում նախապատրաստված 217 նյութի (2009թ.՝ 222) նկատմամբ, որոնցից 160-ով (2009թ.՝ 129) հարուցվել են քրեական գործեր, 57-ով (2009թ.՝ 56) մերժվել է քրեական գործի հարուցումը, այդ թվում՝ հանցակազմի կամ հանցադեպի բացակայության հիմքով՝ 30-ը (2009թ.՝ 17), ոչ արդարացման հիմքով՝ 27-ը (2009թ.՝ 37):

2010թ. հունվարի 1-ի դրությամբ անավարտ քրեական գործերի քանակը կազմել է 46 (2009թ.՝ 42), վարույթ է ընդունվել 188-ը (2009թ.՝ 173), այդ թվում՝ հարուցվել է 158 (2009թ.՝ 129), այլ մարմիններից ստացվել է 25 (2009թ.՝ 29), վերսկսվել է նախկինում վարույթը կասեցված կամ կարճված 5 քրեական գործ (2009թ.՝ 15):

2010թ. ավարտվել է 101 (2009թ.՝ 113) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 91-ը (2009թ.՝ 72) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան՝ ըստ էության քննելու համար, 10 (2009թ.՝ 40) քրեական գործի վարույթ կարճվել է, քննչական ենթակայության կարգով այլ մարմիններ է ուղարկվել 41-ը (2009թ.՝ 17), 7 (2009թ.՝ 4) քրեական գործի վարույթ միացվել է, իսկ 29-ի վարույթը կասեցվել (2009թ.՝ 35), այդ թվում՝ մեղադրյալների քննությունից թաքնվելու հիմքով՝ 5-ը (2009թ.՝ 10), այլ հիմքերով՝ 9-ը (2009թ.՝ 0), իսկ հանցագործությունը չբացահայտվելու հիմքով՝ 15-ը (2009թ.՝ 25):

2011թ. հունվարի 1-ի դրությամբ անավարտ է մնացել 56 (2009թ.՝ 46) քրեական գործ:

Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու (փողերի լվացման) վերաբերյալ 2010թ. ընթացքում հանրապետությունում, ընդհանուր առմամբ, քննվել է նույն թվականին հարուցված 12 քրեական գործ: Նշված ոլորտում կատարված աշխատանքների շնորհիվ Հայաստանի Հանրապետությունը «Եվրախորհրդի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգերի գնահատման (ՄԱՆԻՎԱԼ) հանձնախմբի» գնահատման չափորոշիչներով հսկողության վերցված պետությունների 3-րդ խմբից տեղափոխվել է 2-րդ խումբ և հանվել հսկվող պետությունների ցանկից:

Ստուգվել է 10 քրեական գործի վարույթը կարճելու և 29-ի վարույթը կասեցնելու մասին որոշումների օրինականությունը, որոնք չեն վերացվել:

2010թ. դատախազական հսկողության և դատավարական ղեկավարման տակ է գտնվել 101 (2009թ.՝ 173) քրեական գործով վարույթ, որոնցից 91-ը՝ 179 անձի (2009թ.՝ 72 գործ 112 անձ) նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

2010թ. ընթացքում 72 գործով 123 անձի նկատմամբ (2009թ.՝ 96 գործ, 133 անձ) պաշտպանվել է մեղադրանքը դատարանում և նշված գործերով ազատազրկման ձևով պատիժ է նշանակվել 104 անձի (2009թ.՝ 108) նկատմամբ, կալանք՝ 0, տուգանք՝ 14-ի (2009թ.՝ 9), ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն պատիժ չի կիրառվել 5-ի նկատմամբ (2009թ.՝ 12), ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտվել է 4-ը (2009թ.՝ 9), համաներման կիրառմամբ նշանակված պատիժներից ազատվել է 18-ը (2009թ.՝ 28):

2010թ. ընթացքում ընդհանուր իրավասության դատարաններում արագացված դատական քննության կարգով քննվել է 44 գործ 66 անձի նկատմամբ (2009թ.՝ 51 գործ, 62 անձ):

2010թ. ընթացքում ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող գործերով վարչության դատախազների կողմից բողոքարկվել է 3 դատական ակտ՝ 3-ն էլ միջին ծանրության հանցագործություններով: 3 բողոքն էլ եղել է պատժի մեղմության դեմ, որոնք մերժվել են:

2010թ. ընթացքում ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում քննված քրեական գործերով և նախապատրաստված նյութերով պետությանը պատճառված նյութական վնասը, այդ թվում դատարան ուղարկված 91 քրեական գործով կազմել է 757 961 911 դրամ, որից չի վերականգնվել 264 595 243 դրամ:

Հայաստանի Հանրապետությունում 2010թ. գրանցվել է <u>**ընդհանուր բնույթի հանցագործությունների**</u> 4200 (2009թ.՝ 3272) դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 928-ով կամ 28,4%-ով:

2010թ. արձանագրվել է հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի 170-ով կամ 10.9%-ով աճ (1731-1561):

2010թ. ճանապարհատրանսպորտային հանցագործություններն աճել են 92 դեպքով (791-883), դրան հակառակ՝ 5-ով նվազել են մահվան ելքով դեպքերը (187-182): Ճանապարհատրանսպորտային հանցագործությունների դեպքերի աճը հիմնականում պետք է բացատրել ՀՀ տարածք մեծաքանակ արտասահմանյան ավտոմեքենաների ներկրմամբ և, հետևաբար, դրանց քանակի ավելացմամբ, վերանորոգման կապակցությամբ որոշ մայրուղիների և կամուրջների ժամանակավոր փակ լինելով, ճանապարհային երթևեկության նշանների, ինչպես նաև ստորգետնյա և վերգետնյա հետիոտնային անցումների ոչ բավարար քանակով, ինչպես նաև, որքան էլ տարօրինակ է, բարեկարգված փողոցների առկայությամբ և երթուղիներում սահմանվածից բարձր արագությամբ երթևեկելով:

Հրազեն, ռազմամթերք պատրաստելու և դրանց ապօրինի շրջանառության դեպքերով 2010թ. գրանցվել է հանցագործության կատարման 475 դեպք (2009թ.՝ 415), դեպքերն աճել են 60-ով կամ 14,5%-ով: Զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի պահպանության պարտականությունը ոչ պատշաճ կատարելը կամ չկատարելը, ինչպես նաև դրանց ապօրինի շրջանառության դեպքերը վկայում են ազգաբնակչության մոտ ապօրինի պահվող հրազենի և ռազմամթերքի առկայության մասին, և այս ուղղությամբ ոստիկանությունը դեռևս լուրջ անելիքներ ունի:

2010թ. արձանագրվել է խուլիգանության 373 (2009թ.՝ 355) դեպք, դեպքերն աճել են 18-ով կամ 5,1% -ով, չի բացահայտվել 7-ը (2009թ.՝ 10):

2010թ. 389-ով կամ 21.2%-ով աճել են կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունները (2223-1834):

2010թ. 2-ով կամ 3,0%-ով նվազել են իշխանության ներկայացուցիչների նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերը:

2010թ. 72-ով կամ 7,8%-ով աճել են (997-925) ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայություններից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելու դեպքերը: Դեպքերի աճը վկայում է այս բնույթի հանցագործություններով

դատախազության, զինկոմիսարիատի և ոստիկանության աշխատակիցների կողմից համագործակցված լուրջ աշխատանքներ կատարելու անհրաժեշտության մասին:

2010թ. ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով իրականացվել է 6538 նյութի նախապատրաստման օրինականության նկատմամբ դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում:

2010թ. ավարտված քրեական գործերի նախնական քննության նկատմամբ 2303 քրեական գործով իրականացվել է դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն, 2921 գործով ստուգվել է քրեական գործի վարույթը կարճելու որոշման օրինականությունը, որոնցից 1468-ը՝ անմիջական դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության տակ չգտնվող գործերով, վերացվել է քրեական գործերի վարույթը կարճելու 26 որոշում, ստուգվել է քրեական գործերի վարույթը կասեցնելու մասին 2109 որոշման օրինականություն, որոնցից անմիջական դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության տակ չգտնվող գործերով՝ 1009-ը: Վերացվել է քրեական գործի վարույթը կասեցնելու 24 որոշում:

2010թ. ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերի վերաբերյալ դատարան է ուղարկվել 836 քրեական գործ՝ 1178 անձի նկատմամբ (2009թ.՝ 521 գործ, 684 անձ), որոնցից ազատազրկման է դատապարտվել 380-ը, կալանքի՝ 33-ը, տուգանքի՝ 413-ը, հիմնական այլ պատիժների՝ 7-ը, պատիժը պայմանականորեն չի կիրառվել 165 անձի նկատմամբ, քր. օր-ի 64-րդ հոդվածը կիրառվել է 5 անձի նկատմամբ, կարճվել է 22 անձի վերաբերյալ քրեական գործը, արդարացվել է 10-ը, քր. դատ. օր-ի 309[1]-րդ հոդվածով դատաքննությունը հետաձգվել է 3 գործով, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ է կիրառվել 13 անձի նկատմամբ: Դատարանների կողմից կարճվել է 19 գործ՝ 22 անձի նկատմամբ:

2010թ. ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով պատճառված նյութական վնասի չափը կազմել է 2 439 000 դրամ, պետական գույքին պատճառված վնասի չափը 2 364 000 դրամ, ֆիզիկական անձանց գույքին պատճառված վնասի չափը 75 000 դրամ: Նյութական վնասի վերականգնման համար գույքի վրա 200 000 գումարի չափով կալանք է դրվել, ավարտված դատաքննությամբ վերականգնվել է հանցագործությամբ պատճառված 2 239 000 ՀՀ դրամի չափով նյութական վնաս, պետական գույքին պատճառված վնասի չափից վերականգնվել է 2 164 000, ֆիզիկական անձանց պատճառված գույքային վնասի վերականգնման չափից 75 000 դրամ, մերժված նյութերով պատճառված վնասի չափը կազմել է 372500500 դրամ, վերականգնվել է 2710000-ը:

<u>Թմրամիջոցների ապօրինի շրջանառության ոլորտում</u> 2010թ. գրանցվել է 1524 (2009թ.՝ 1238) հանցագործության դեպք, այսինքն՝ դեպքերն ավելացել են 286-ով կամ 23,1%-ով: Արձանագրված դեպքերից բացահայտվել են 1206-ը (2009թ.՝ 968), չի բացահայտվել 187-ը (2009թ.՝ 138): Բացահայտումը նախորդ տարվա 87,5%-ի դիմաց կազմել է 86,6%, այսինքն՝ նվազել է 0,9%-ով:

2010թ. այս բնույթի հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստված 5 (2009թ.՝ 10) նյութի նկատմամբ իրականացվել է դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն:

2010թ. քննչական մարմինների վարույթում քննվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների վերաբերյալ 1655 (2009թ.՝ 1318) քրեական գործ: Վարույթում քննված քրեական գործերից բացահայտվել են 1292-ը (2009թ.՝ 1024), չի բացահայտվել 230-ը (2009թ.՝ 160): Բացահայտման տոկոսը նախորդ տարվա 86,5%-ի դիմաց կազմել է 84,9% (2009թ.՝ 86,5%), այսինքն՝ նվազել է 1,6%-ով:

2009թ.-ից 2010թ. է փոխանցվել է 132, իսկ 2010թ.-ից 2011թ. է փոխանցվել 131 քրեական գործ:

2010թ. դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն է իրականացվել թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների վերաբերյալ քննված 1655 (2009թ.՝ 1318) քրեական գործի նկատմամբ, որից 1261-ը (2009թ.՝ 939) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 230-ը (2009թ.՝ 85) կասեցվել է, 31-ը (2009թ.՝ 160)՝ կարճվել:

2010թ. թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործություններ կատարելու համար քրեական պատասխանատվության է ենթարկվել 854 անձ՝ նախորդ տարվա 780-ի դիմաց:

ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նարկոլոգիական կլինիկա և ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպություն փորձաքննության ներկայացված 1631 անձից հաշվառման է վերցվել 1153-ը (որից 17-ը՝ կանայք, 32-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետության և 1-ը՝ Իսպանիայի Թագավորության քաղաքացիներ):

2010թ. ընթացքում հանրապետությունում գրանցվել է նաև թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված վարչական իրավախախտման 296 (2009թ.՝ 130) դեպք), որից՝ առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածելու համար (ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 44.2-րդ հոդված) վարչական պատասխանատվության է ենթարկվել 295 (2009թ.՝ 122) անձ: Ապօրինաբար ձիթախաշխաշ կամ կանեփ ցանելու կամ աճեցնելու համար (ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 110^2-րդ հոդված) վարչական պատասխանատվության է ենթարկվել 1 (2009թ.՝ 8) անձ:

2010 թվականի ընթացքում դատախազների կողմից հաստատված մեղադրական եզրակացություններով ընդհանուր իրավասության դատարաններ է ուղարկվել թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների վերաբերյալ 1261 (2009թ.՝ 939) քրեական գործ, որից քննվել է 495 քրեական գործ՝ 644 անձի նկատմամբ: Քննված քրեական գործերից 483-ով արձակվել է մեղադրական դատավճիռ՝ 630 անձի նկատմամբ, 7-ով կիրառվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, 3-ով վարույթը կարճվել է, 2-ով 4 անձի նկատմամբ կայացվել են արդարացման դատավճիռներ: Նշված անձանցից ազատազրկման է դատապարտվել 447 անձ, որից 16-ն օտարերկրացի: Կալանքի դատապարտվել է 77 անձ, տուգանքի 4-ը: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել 102 անձի նկատմամբ, լրացուցիչ պատիժ է նշանակվել 17 անձի նկատմամբ:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ դեպքերի աճը պայմանավորված է օպերատիվ-հետախուզական, ինչպես նաև քննչական և դատախազական հսկողության արդյունավետ համագործակցությամբ:

Հայաստանի Հանրապետության դատախազության մարմինները որոշակի աշխատանք են կատարել **<u>կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով</u>** օրինականության պահպանման, քաղաքացիների իրավունքների պաշտպանության և այդ բնագավառին վերաբերող դատախազական գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

2010թ. նախապատրաստվել է կոռուպցիոն բնույթի 895 (2009թ.՝ 771) նյութ՝ նախորդ տարվա համեմատ 124-ով ավելի, որոնցից 385-ով (2009թ.՝ 370) հարուցվել է քրեական գործ, որը նախորդ տարվա համեմատությամբ ավելի է 15-ով: Հարուցված քրեական գործերի թվաքանակի աճը պայմանավորված է այս ոլորտում դատախազական հսկողության արդյունավետության բարձրացմամբ:

Նախապատրաստված 402 (2009թ.՝ 348) նյութով քրեական գործի հարուցումը մերժվել է, որոնցից 213-ը (2009թ.՝ 267)՝ արդարացման, իսկ 189-ը (2009թ.՝ 81)՝ ոչ արդարացման հիմքերով, գերակշռությամբ՝ պատճառված նյութական վնասները հատուցելու հիմքով:

2010թ. ընթացքում ավարտվել է 375 (2009թ.՝ 341) քրեական գործ, 158 (2009թ.՝ 155) քրեական գործի վարույթ կարճվել է, 58-ը (2009թ.՝ 54)՝ արդարացման, իսկ 100-ը (2009թ.՝ 101)՝ ոչ արդարացման հիմքերով:

Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված քրեական գործերով 54 (2009թ.՝ 74) անձ գտնվել է նախնական կալանքի տակ:

Ընթացք տրված քրեական գործերից 41 (2009թ.՝ 49) անձի վերաբերյալ վարույթները կասեցվել են, որոնցից 31-ով (2009թ.՝ 31)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով, մյուսները այլ հիմքերով:

2010թ. անավարտ է մնացել ընդհանուր հաշվով 124 (2009՝ 139) քրեական գործ, որոնցով 14 (2009թ.՝ 40) անձ գտնվել է կալանքի տակ:

2010թ. դատարաններում քննվել է կոռուպցիոն բնույթի 150 քրեական գործ՝ 193 անձի նկատմամբ (2009թ.՝ 183 քրեական գործ՝ 240 անձի նկատմամբ) կամ 33 քրեական գործով և 47 անձով պակաս, որոնցից դատապարտվել է 144 քրեական գործով 182 անձ (2009թ.՝ 161 քրեական գործով 208 անձ), կամ 17 գործով և 26 անձով պակաս:

2010թ. 74 քրեական գործով 94 անձի (2009թ.՝ 110 գործով 144 անձ) նկատմամբ կիրառվել է դատական քննության արագացված կարգ:

Դատապարտված 182 անձից 103-ը կամ դատապարտված անձանց 56,6%-ը եղել է պաշտոնատար անձ (2009թ.՝ 208-ից 102-ը կամ 49%-ը):

Դատապարտված անձանցից 102-ը (2009թ.՝ 136) ենթարկվել է ազատազրկման ձևով պատժի, 60-ը կամ 56%-ը (2009թ.՝ 50 կամ 56,6%)՝ տուգանքի, մյուսները՝ այլ պատիժների:

Դատաքննության արդյունքներով 50 (2009թ.՝ 85) անձ պատժից ազատվել է համաներման ակտի կիրառմամբ, իսկ 4 անձի նկատմամբ արձակվել է արդարացման դատավճիռ (2009թ.՝ 1 գործ՝ 4 անձի նկատմամբ):

Կոռուպցիոն բնույթի հանցագործություններով քննված քրեական գործերով պատճառվել է 4 մլրդ 553 մլն 173 հազ. դրամ (2009թ.՝ 5 մլրդ 601 մլն 682 հազ. դրամ), որից պետությանը պատճառված վնասը կազմել է 4 մլրդ 357 մլն 838 հազ. դրամ (2009թ.՝ 5 մլրդ. 320 մլն 583 հազ. դրամ): Պետությանը պատճառված նյութական վնասից մերժված նյութերով վերականգնվել է 2 մլրդ 490 մլն 791 հազ. դրամ (2009թ.՝ 794 մլն 829 հազ. դրամ), կարճված քրեական գործերով՝ 366 մլն 463 հազ. դրամ (2009թ.՝ 257 մլն 714 հազ. դրամ), դատարանում քննված և ավարտված քրեական գործերով՝ 112 մլն 037 հազ. դրամ կամ 2,6% (2009թ.՝ 1 մլրդ 352 մլն դրամ կամ 25,4 %):

2010թ. կոռուպցիոն բնույթի գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ դատախազների կողմից բերվել է ընդամենը 13 (2009թ.՝ 21) վերաքննիչ բողոք: Ներկայացված բողոքներից 4-ը (2009թ.՝ 8) մերժվել է, 4-ը (2009թ.՝ 6) բավարարվել է, 5 բողոքի քննություն ընթացքի մեջ է: Նույն ժամանակաշրջանում դատախազների կողմից բերվել է 10 վճռաբեկ բողոք, որոնցից 4-ը (2009թ.՝ 2) բավարարվել է, 2-ը (2009թ.՝ 2) մերժվել է, 2 բողոքի քննություն գտնվում է ընթացքի մեջ:

2010թ. <u>պետական շահերի պաշտպանության</u> բնագավառում ՀՀ դատախազության կողմից կատարվել է 433 ստուգում (2009թ.՝ 293), հայտնաբերվել է 553 իրավախախտում, պետության շահերին հասցրած վնասը կամովին վերականգնելու մասին նախազգուշացվել է 271 անձ, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու նպատակով նախապատրաստվել է 211 նյութ, որոնցով հարուցվել է 203 հայց և 91 քրեական գործ, կամովին պետբյուջե է վերականգնվել 972 մլն 458 հազար դրամ:

2010թ. պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու նպատակով, ինչպես նաև պետական շահերի խախտման վերաբերյալ ստացված հաղորդումների հիման վրա նախապատրաստված նյութերով, հարուցվել է 123 (2009թ.՝ 86) քրեական գործ, որոնցից ավարտվել է 66 (2009թ.՝ 49) գործի քննություն՝ դատարան է ուղարկվել 45 (2009թ.՝ 35), կարճվել է 21 (2009թ.՝ 14) քրեական գործ, մինչդատական վարույթի ընթացքում վերականգնվել է 172,3 մլն (2009թ.՝ 17,3 մլն) դրամ, իսկ դատաքննության ընթացքում՝ 29,8 մլն (2009թ.՝ 5,7 մլն) դրամ գումար:

2010թ. դատարան է հարուցվել 260 հայց՝ 1 մլրդ 839 մլն 014 հազար դրամի բռնագանձման պահանջով (2009թ.՝ 210 հայց՝ 1 մլրդ 753 մլն 868 հազար դրամի բռնագանձման պահանջով): Դատարաններում քննվել է 194 հայց, որոնցից բավարարվել է 1 մլրդ 381 մլն 282 հազար դրամ հայցապահանջով 162 հայց (2009թ.՝ 165 հայցով բավարարվել է 540 մլն 246 հազար դրամ հայցապահանջով 158 հայց, մերժվել է 5 հայց), մերժվել է 7, կարճվել՝ 14 հայց: Դատաքննության ընթացքում փաստացի վերականգնվել է 103 մլն 154 հազ. դրամ:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը բերել է 4 վերաքննիչ բողոք, որոնք բավարարվել են:

2010թ. պետական մարմիններից ստացվել է ստորադաս դատարանների դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ 54 միջնորդություն (2009թ.՝ 159), որոնց քննարկման, ինչպես նաև առանց միջնորդությունների դատական ակտեր բողոքարկելու նպատակով, դատարաններից պահանջվել և ուսումնասիրվել է 98 քաղաքացիական և վարչական գործ, բերվել է 39 (2009թ.՝ 110) վճռաբեկ բողոք, որոնցից բավարարվել է 5-ը (2009թ.՝ 26), դատարանի կողմից հետ է վերադարձվել 25-ը (2009՝ 68), 1 վճռաբեկ բողոք մերժվել է, իսկ 8-ը դեռևս չի քննարկվել, մերժվել է վճռաբեկ բողոք բերելու 22 միջնորդություն:

2010թ. պետական շահերին վնաս պատճառելու վերաբերյալ գործերով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի բերած 39 վճռաբեկ բողոքի գումարը կազմել է 1 մլրդ 491 մլն 654 հազար դրամ, իսկ ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից բավարարված բողոքների գումարը կազմել է

ընդամենը 79,5 մլն դրամ, վերադարձված բողոքների գումարը՝ 955,2 մլն դրամ, մերժված բողոքի գումարը՝ 234,7 մլն դրամ:

<u>Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության իրականացման բնագավառում՝</u> 2010թ. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում, հոգեբուժական հաստատություններում և անչափահասների դաստիարակչական հսկողություն իրականացնող հաստատություններում կատարվել է 242 հանցագործություն 269 անձի (2009թ.՝ 150 հանցագործություն, 162 անձ) կողմից, այդ թվում՝ փախուստ ՔԿՀ-ից՝ 2 (2009թ.՝ 2) դեպք, փախուստի փորձ՝ 5 (2009թ.՝ 1) դեպք, թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության՝ 193 (2009թ.՝ 119) դեպք, որոնցից 132-ը (2009թ.՝ 86) թմրամիջոցների իրացման, 61-ը (2009թ.՝ 33)՝ առանց իրացնելու նպատակի, խուլիգանության՝ 2 (2009թ.՝ 1), պատիժն ի կատար ածող հիմնարկի գործունեությանը խոչընդոտելու՝ 6 (2009թ.՝ 3), ինքնասպանության փորձի՝ 13 (2009թ.՝ 3) և ինքնասպանության հասցնելու՝ 4 (2009թ.՝ 4), առողջությանը ծանր մարմնական վնաս պատճառելու՝ 4, որոնցից 3-ով անզգուշությամբ պատճառվել է մահ, առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու 5 դեպք, առողջությանը թեթև վնաս պատճառելու 4 դեպք, ծեծի՝ 1, աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելու՝ 1, վաշխառության՝ 1, սուտ մատնության՝ 1 դեպք:

2010թ. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում մահացել է 37 (2009թ.՝ 14) դատապարտյալ, որոնցից 4-ը ինքնասպանություն գործելու եղանակով: Նշված 4 դեպքով հարուցվել են քրեական գործեր և կատարվել է նախաքննություն: 33 դատապարտյալի մահվան փաստերով նախապատրաստվել են նյութեր, պարզվել են մահվան պատճառները և որոշումներ են կայացվել հանցադեպի կամ հանցակազմի բացակայությամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

2010թ. անչափահասների դաստիարակչական հսկողություն իրականացնող հաստատություններում հանցագործությունների դեպքեր չեն գրանցվել (2009թ.՝ 4):

2010թ. դեպքերն աճել են 92-ով կամ 61,3 %-ով: 2010թ. գրանցված 242 դեպքով հանցագործություն է կատարել 269 անձ, այսինքն՝ 107-ով կամ 66, 0%-ով ավելի:

2010թ. դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում է իրականացվել ավարտված 370 (2009թ.՝ 193) նյութի նախապատրաստման նկատմամբ, որոնցից 289-ը (2009թ.՝ 173) վերաբերել է նախաքննությանը, իսկ 81-ը (2009թ.՝ 20)՝ հետաքննությանը:

Ավարտված 370 նյութից 218-ով հարուցվել է քրեական գործ: Հարուցված 218 քրեական գործից 23-ը եղել է մարդու դեմ ուղղված, 1-ը՝ սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված, 15-ը՝ ընդհանուր բնույթի հանցագործությունների և 179-ը՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության փաստերով նախապատրաստված նյութերով:

Նախապատրաստված 142 նյութով մերժվել է քրեական գործի հարուցումը: Մերժված նյութերից 117-ը եղել են մարդու դեմ ուղղված, 1-ը՝ սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված, 6-ը՝ ընդհանուր բնույթի հանցագործությունների և 18-ը՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության փաստերով նախապատրաստված նյութեր, մերժված 142 նյութից 133-ը մերժվել է արդարացման և միայն 9-ը՝ ոչ արդարացման հիմքերով:

2010թ. անավարտ է մնացել 13 նյութ, որոնք փոխանցվել են 2011թ.:

2010թ. ընթացք է տրվել 271 քրեական գործի, որոնցից 42-ը փոխանցվել է 2009 թվականից, իսկ 229-ը հարուցվել և վարույթ է ընդունվել 2010թ. ընթացքում: Քննված 271 քրեական գործից 257-ի (2009թ.՝ 183) նախաքննության նկատմամբ դատախազական ղեկավարում և դատախազական հսկողություն է իրականացվել ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության, 10-ի նկատմամբ՝ Շիրակի, 6-ի՝ Լոռու և 2-ի նկատմամբ Սյունիքի մարզերի դատախազությունների կողմից:

2010թ. քննված 257 քրեական գործից ավարտվել է 102-ը կամ 40%-ը, որոնցից 18-ը կարճվել է, իսկ 84-ը՝ 114 անձի նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 18 քրեական գործ կարճվել է արդարացման հիմքով՝ հանցակազմի կամ հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ: Կասեցվել է 96 քրեական գործի վարույթ:

2010թ. վարույթ քննված 11 քրեական գործ ըստ ենթակայության ուղարկվել է այլ մարմիններ՝ հետագա ընթացքը լուծելու համար: Անավարտ է մնացել 43 քրեական գործ:

2010թ. մեղադրական եզրակացությամբ դատարաններ են ուղարկվել 84 քրեական գործ՝ 114 անձի նկատմամբ, որոնք բոլորն էլ դատարանների կողմից ընդունվել են վարույթ:

2010թ. դատարան ուղարկված 84 քրեական գործից քննվել է 66-ը՝ 81 անձի նկատմամբ (2009թ.՝ 52 քրեական գործ, 65 անձ):

Դատարաններում քննված 66 գործից 16-ով՝ 19 անձի նկատմամբ կիրառվել է դատական քննության արագացված կարգ: Արագացված կարգի կիրառմամբ քննված բոլոր 16 գործով դատի տրված 19 անձ դատապարտվել է ազատազրկման, որոնցից 2-ի նկատմամբ (2-ն էլ կին) ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված ազատազրկում պատիժը պայմանականորեն չի կիրառվել:

2010թ. դատարանների կողմից բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վերաբերյալ որոշումներ են կայացվել անմեղսունակության վիճակում հանրորեն վտանգավոր արարքներ կատարած 51 անձի նկատմամբ: Դատարանների որոշումներով 39 անձի նկատմամբ նշանակվել է հարկադիր բուժում ընդհանուր տիպի հոգեբուժական հիվանդանոցում, 7 անձի նկատմամբ՝ հատուկ տիպի հոգեբուժական հիվանդանոցում, 5-ի նկատմամբ՝ հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողություն:

2010թ. դատարաններում քննված 66 գործից 2-ով (2-ն էլ ՀՀ քր.օր.-ի 178-րդ հոդվածի 2-րդ մասով) հանցագործությամբ ֆիզիկական անձանց պատճառված գույքային վնասը կազմել է 1 104 007 դրամ, որից դատաքնությամբ վերականգնվել է 160 000 դրամ:

«Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 19.06.2009թ. որոշման համաձայն պատժի հետագա կրումից 2010 թվականին ազատվել է 327 մարդ:

2010թ. ցմահ ազատազրկման է դատապարտվել 100 (2009թ.՝ 81) դատապարտյալ:

<u>Դատախազական աշխատանքի ամփոփ տվյալներ.</u>

2010 թվականի ընթացքում ՀՀ դատախազության կողմից դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում է իրականացվել 25049 նյութի նախապատրաստման, 12156 քրեական գործի հետաքննության և նախաքննության նկատմամբ: Դատախազների կողմից վերացվել է հետաքննության և նախաքննության մարմինների կողմից կայացված 387 որոշում: Քրեական գործերով և նյութերով հետաքննության և նախաքննության մարմիններին տրվել է 2524 գրավոր ցուցում: Մինչդատական վարույթում դատախազների կողմից դատարան է ներկայացվել, ինչպես նաև դատախազների մասնակցությամբ քննվել է 66 միջնորդություն (որպես խափանման միջոց կիրառվել են կալանքը, խուզարկության և դատավարական հարկադրանքի այլ միջոցներ): Դատարանում մեղադրանքը պաշտպանվել է 2900 քրեական գործով: Դատախազների կողմից քրեական գործերով դատական ակտերի՝ դատավճիռների, վճիռների և որոշումների դեմ բերվել է 217 վերաքննիչ և 113 վճռաբեկ բողոք: Ընդ որում, 217 վերաքննիչ բողոքից բավարարվել է 75-ը, իսկ 113 վճռաբեկ բողոքից՝ 18-ը: ՀՀ դատախազության կողմից հարուցվել է 262 հայց, որոնցից պետական շահերի պաշտպանության մասով դատարանի կողմից քննության է առնվել 194-ը, բավարարվել է 162-ը: Կատարվել է 2056 ստուգում, ուսումնասիրություն, ամփոփում: Ներկայացվել է 800 նախազգուշացում, հաղորդում և միջնորդագիր: Ընթացք է տրվել 10288 դիմումի, բողոքի, առաջարկության:

<u>ՀՀ զինվորական դատախազության կողմից</u> 2010թ. ՀՀ ԶՈՒ–ի և այլ զորքերի զորամասերում արձանագրվել է 3935 (2009թ.՝ 3422) դեպք: Արձանագրվել է աճ 513 դեպքով կամ 15%-ով: Արձանագրված դեպքերից 2704-ը (2009թ.՝ 2335) կամ 68,7%-ը (2009թ.՝ 68,2%) եղել են պատահարներ, 1187-ը (2009թ.՝ 1064) կամ 30,2%-ը (2009թ.՝ 31,1%)՝ հանցագործություններ, այդ թվում՝ 756-ը (2009թ.՝ 670) կամ 63,7%-ը (2009թ.՝ 63%)՝ զինվորական, 431-ը (2009թ.՝ 394) կամ 36,3%-ը (2009թ.՝ 37%)՝ այլ ընդհանուր, 44 (2009թ.՝ 23) դեպքի կամ 1,1%-ի (2009թ.՝ 0,7%) հանգամանքները դեռևս չեն պարզվել:

2010թ. արձանագրված 46 (2009թ.՝ 30) առանձնապես ծանր հանցագործություններից 28-ը սպանության փորձի դեպքեր են, որոնցից 27-ը (2009թ.՝ 19) կատարվել է հակառակորդի, 1-ը (2009թ.՝ 2)՝ համածառայակցի կողմից, 8-ը (2009թ.՝ 6) հակառակորդի կողմից կատարված սպանության դեպքեր են, որոնց հետևանքով զոհվել է 11 զինծառայող, 5-ը (2009թ.՝ 2) համածառայակիցների կողմից կատարված սպանության դեպքեր են, որոնց հետևանքով զոհվել է 12 զինծառայող, 5-ը (2009թ.՝ 2) պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու դեպքեր են:

2010թ. արձանագրվել է ծառայության հետ կապված մահվան 43 (2009թ.՝ 43) դեպք, որի հետևանքով մահացել է 54 (2009թ.՝ 44) զինծառայող, որոնցից հակառակորդի կողմից սպանության՝ 11 (2009թ.՝ 6), սպանության՝ 12 (2009թ.՝ 2), ԶՕԿ-ի խախտման հետևանքով՝ 4 (2009թ.՝ 3), ինքնասպանության՝ 3 (2009թ.՝ 4), ինքնասպանության հասցնելու՝ 3 (2009թ.՝ 5), բռնարարքի՝ 1 (2009թ.՝ 2), հիվանդություններից՝ 9 (2009թ.՝ 6), ավտովթարից՝ 6 (2009թ.՝ 5) և դժբախտ պատահարների հետևանքով՝ 5 (2009թ.՝ 7):

2010թ. ծանրության տարբեր աստիճանի մարմնական վնասվածք է ստացել 1826 (2009թ.՝ 1541) զինծառայող, այսինքն՝ արձանագրվել է 285-ով կամ 18,5%-ով աճ:

2010թ. հանցագործությունների բացահայտումը կազմել է 97,4 % (2009թ.՝ 97,0%):

2010թ. ՀՀ զինվորական դատախազության հսկողությամբ նախապատրաստվել է 5349 նյութ (2009թ.՝ 4322), որոնցից 1902-ը (2009թ.՝ 1719)՝ քննչական, 3447-ը (2009թ.՝ 2603)՝ ՌՈ ստորաբաժանումների և զորամասերի կողմից: Քննչական ստորաբաժանումների կողմից նախապատրաստված 1902 նյութից 795-ով հարուցվել է քրեական գործ, 871-ը մերժվել է (531-ը՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդ. 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 214-ը՝ ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդ. 1-ին մասի 3-13-րդ կետերով, 126-ը՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդ. 2-րդ մասով), 46 նյութ ուղարկվել է ըստ ենթակայության, 100 նյութ միացվել է այլ նյութերի, 23 նյութ միացվել է քրեական գործերի, իսկ 67 նյութ փոխանցվել է 2011թ.:

2010թ. ՀՀ զինվորական դատախազության մարմինների կողմից դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում է իրականացվել ՀՀ ՊՆ ՔԾ բաժինների վարույթում քննվող 1225 քրեական գործի նկատմամբ, որոնցից 8-ը՝ կրկնակի (2009թ.՝ 1132), դրանցից 124-ը փոխանցվել է նախորդ տարվանից (2009թ.՝ 111), 847-ը հարուցվել է հաշվետու տարում (2009թ.՝ 759), որոնցից 771-ը՝ քննչական մարմնի (2009թ.՝ 677), 76-ը՝ կայազորների զինվորական դատախազների (2009թ.՝ 82) կողմից, 110-ը ստացվել է այլ մարմիններից (2009թ.՝ 109), 10-ը անջատվել է այլ քրեական գործերից, 126-ով վերսկսվել է նախաքննությունը (2009թ.՝ 153), 8-ը դատախազի կողմից վերադարձվել է լրացուցիչ նախաքննության:

2010թ. ավարտված քրեական գործերից 674-ը՝ 936 անձի (2009թ.՝ 577 գործ, 783 անձ) նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, իսկ 5 քրեական գործ 5 (2009թ.՝ 0) անձի նկատմամբ դատարան է ուղարկվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու որոշմամբ: 186 (2009թ.՝ 226) քր. գործով վարույթը կարճվել է:

2010թ. 113 (2009թ.՝ 115) քրեական գործի վարույթ կասեցվել է: 45 (2009թ.՝ 46) քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 52-ը (2009թ.՝ 44) միացվել է այլ գործերի, 147-ը (2009թ.՝ 124) փոխանցվել 2011թ.:

2010թ. քննչական մարմինների վարույթում քննված քրեական գործերով և նախապատրաստված նյութերով հիմնավորվել են հանցագործություններով պետությանը 133 346 049 (2009թ.՝ 104 331 448) դրամի վնասի պատճառման փաստեր, որից մինչդատական վարույթում վերականգնվել է 109 440 101 (2009թ.՝ 42 679 930) դրամը:

2010թ. զինծառայողների կողմից կամ նրանց մասնակցությամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ ՀՀ զինվորական դատախազության կողմից մեղադրական եզրակացությամբ ընդհանուր իրավասության դատարաններ է ուղարկվել 674 քրեական գործ՝ 936 անձի (2009թ.՝ 577 գործ, 783 անձ) վերաբերյալ, իսկ 5 քրեական գործ 5 անձի նկատմամբ դատարան է ուղարկվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու որոշմամբ: Դատարան ուղարկված բոլոր գործերն էլ ընդունվել են վարույթ:

Նախորդ տարվանից փոխանցված քրեական գործերի հետ մեկտեղ, ընդհանուր առմամբ, 617 քրեական գործի դատաքննությունն ավարտվել է դատավճռի կայացմամբ, դատապարտվել է 874 անձ (2009թ.՝ 512 գործ, 656 անձ):

Դատարանների որոշումներով 7 քրեական գործ 16 անձի վերաբերյալ կարճվել է: 30 անձ պատժի կրումից ազատվել է համաներման կիրառմամբ: 1 գործով 2 անձի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ (2009թ.՝ 0): 4 անձի նկատմամբ դատարանի որոշմամբ կիրառվել են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ (2009թ.՝ 0):

Նախորդ տարվա համեմատությամբ 105-ով ավելացել է դատարանների վարույթում ավարտված քրեական գործերի և 218-ով՝ դատապարտվածների թիվը:

Դատապարտված 874 անձից 1-ը (2009թ.՝ 0) դատապարտվել է ցմահ ազատազրկման, 227-ը (2009թ.՝ 230)՝ ազատազրկման, 246-ը (2009թ.՝ 173)՝ կալանքի, 97-ը (2009թ.՝ 82)՝ կարգապահական գումարտակում պահելու, 82-ը (2009թ.՝ 58)՝ տուգանքի, պատիժը պայմանականորեն չի կիրառվել 221 (2009թ.՝ 113) անձի նկատմամբ: Դատապարտվածներից 15 (2009թ.՝ 7) անձ նախնական կալանքից ազատվել է այլ պատժի նշանակմամբ, իսկ ազատազրկման է դատապարտվել նախնական կալանքի տակ չգտնվող 58 (2009թ.՝ 109) անձ: 1 դատապարտվածի նկատմամբ նշանակվել է նաև լրացուցիչ պատիժ: 4 (2009թ.՝ 0) անձի նկատմամբ կիրառվել են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ:

Կազմակերպական-վերահսկողական գործունեության ընթացքում 2010թ. ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից ընդունվել է 28 (2009թ.՝ 59) հրաման, կազմվել է ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների 7 կարգադրություն և 18 հանձնարարական

Հրավիրվել է ՀՀ դատախազության 8 (2009թ.՝ 7) կոլեգիայի նիստ, որոնց առնչությամբ կատարվել են համապատասխան կազմակերպական աշխատանքներ՝ հավաքվել են ամփոփիչ տեղեկանքները, նյութերը, որոշումների նախագծերը, դրանք բազմացվել ու տրամադրվել են կոլեգիայի մասնակիցներին, կազմվել են կոլեգիայի արձանագրություններն ու որոշումները, որոնցից յուրաքանչյուրը կրկնակի լրամշակվել է, դրվել շրջանառության մեջ, կազմվել են արձանագրություն ու որոշման նախագիծ և ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազի հաստատմանը:

ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների հանձնարարությամբ անցկացվել է դատախազների կողմից ծառայողական պարտականությունների կատարման և վարքագծի կանոնների պահպանման, ինչպես նաև օրենքի պահանջների կատարման վիճակը պարզելու նպատակով 19 ուսումնասիրություն՝ 28 դատախազի և դատախազության դպրոցի աշխատակցի (2009թ. 7 ուսումնասիրություն, 11 դատախազ) վերաբերյալ, որոնցից՝

- 9 դեպքով 8 դատախազի և դատախազության դպրոցի աշխատակցի վերաբերյալ ուսումնասիրությունները կապված են եղել դատախազի մասնագիտական վարքագծի կանոնները և օրենքի պահանջները խախտելու, ինչպես նաև անգործություն դրսևորելու, իսկ երբեմն նաև անհիմն գործողություններ կատարելու հետ:
- 1 դեպքով 2 դատախազի վերաբերյալ ուսումնասիրությունները կապված են եղել ՀՀ դատախազության կոլեգիայի պահանջը ոչ պատշաճ կատարելու հետ:
- 9 դեպքով 19 դատախազի վերաբերյալ ուսումնասիրությունները կապված են եղել նյութերի նախապատրաստման և քրեական գործերի նախաքննության նկատմամբ թերի ու մակերեսային դատավարական ղեկավարում, դատախազական հսկողություն իրականացնելու հետ կապված ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու և օրենքի պահանջների խախտում թույլ տալու հետ:

Նշված ուսումնասիրություններից 13-ը 17 դատախազի և դատախազության դպրոցի տնօրենի վերաբերյալ անցկացվել են քաղաքացիների դիմում-բողոքների հիման վրա:

ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ երկու մարզերի դատախազություններում կատարվել են դատախազական լիազորությունների իրականացման և գործունեության կազմակերպման հարցադրումներով համալիր և առարկայական ստուգումներ:

Նախատեսվում է առաջիկայում նույնպես, աշխատանքային ծանրաբեռնվածությամբ պայմանավորված, հնարավորության դեպքում, գլխավոր դատախազի հանձնարարությամբ, դատախազություններում ու կառուցվածքային ստորաբաժանումներում իրականացնել դատախազական լիազորությունների իրականացման և աշխատանքների կազմակերպման, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումների և ՀՀ գլխավոր դատախազի ու նրա տեղակալների ցուցումների, հրամանների, հանձնարարականների կատարման հարցումներով ուսումնասիրություններ, ինչպես նաև համալիր ստուգումներ, և ՀՀ գլխավոր դատախազին ներկայացնել այդ մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկներ, վերահսկել հայտնաբերված խախտումների փաստացի վերացումը, տեղերում ստուգել կատարողական կարգապահությունը:

Իրականացվել է 2 կարգապահական վարույթ՝ 3 դատախազի նկատմամբ (2009թ.՝ 6 կարգապահական վարույթ՝ 9 դատախազի նկատմամբ): 1 դեպքով 1 դատախազի նկատմամբ կարգապահական վարույթը կապված է եղել հերթական ատեստավորմանն անհարգելի

պատճառով չներկայանալու հետ, որի կապակցությամբ դատախազի նկատմամբ կիրառվել է «նկատողություն» տեսակի կարգապահական տույժը:

1 դեպքով 2 դատախազի նկատմամբ կարգապահական վարույթը կապված է եղել դատախազի վարքագծի կանոնները չպահպանելու, այն է՝ «ՀՀ գլխավոր դատախազության վարչական շենքերի տարածքներում ծխելն արգելելու մասին» Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007թ. դեկտեմբերի 12-ի N 75 հրամանի պահանջը խախտելու հետ:

Իրականացված կարգապահական վարույթի հիման վրա դատախազներից մեկի նկատմամբ կիրառվել են «նկատողություն», իսկ մյուսի նկատմամբ «դիտողություն» տեսակի կարգապահական տույժերը:

2010թ. վերահսկողության է վերցվել ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից հսկողության վերցված 1714 (2009թ.՝ 1822) դիմում-բողոքով տրված հանձնարարական:

Այս գործառույթի իրականացման շրջանակներում ամփոփվել է նաև 2009թ. 2-րդ կիսամյակի և 2010թ. 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից հսկողության վերցված համապատասխանաբար 978 և 912 դիմում-բողոքներով տրված հանձնարարականների կատարում, որոնց արդյունքներով հայտնաբերվել են՝ 32-ով՝ կատարման ժամկետների, իսկ 31-ով՝ հանձնարարականներն ըստ պատկանելության ուղարկելու 3-օրյա ժամկետի խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է համապատասխան տեղեկատվական նամակ և ուղարկվել բոլոր դատախազություններին, կառուցվածքային ստորաբաժանումներին և ավագ դատախազներին, ինչպես նաև ՀՀ դատախազության աշխատակազմին և «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ին:

Կատարված ամփոփումները ցույց են տվել, որ ՀՀ դատախազության համակարգում կատարված դատախազական աշխատանքի, դատախազական ներգործության միջոցների կիրառման և դատախազական ակտերի կայացման վիճակը դեռևս պետք է բարելավել, չնայած այդ մասով արձանագրվել է դատախազական ցուցանիշների որոշակի աճ: Այս առումով, նախորդ համապատասխան ժամանակաշրջանների նման ամփոփվել են նյութերով քրեական գործի հարուցումը վերացնելու, քրեական գործ հարուցելու, քրեական գործերի վարույթները կարճելու, կասեցնելու, քննիչին վարույթից հեռացնելու մասին որոշումները վերացնելու, նյութերով և քրեական գործերով տրված գրավոր ցուցումների, դատախազների կողմից պատկան մարմիններին ու կազմակերպություններին ուղարկած միջնորդագրերի, հաղորդումների, միջնորդությունների (այդ թվում նաև հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձին վարույթից հեռացնելու մասին և այլն) և քննիչների ամսական ծանրաբեռնվածության ցուցանիշները, որոնց արդյունքներով կազմվել են համապատասխան վերլուծական նյութեր, ինչպես նաև կազմվել է կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր դատախազի ամսական միջին ծանրաբեռնվածությունը և դրա արդյունքներով արվել են համապատասխան հետևություններ (հաստիքների վերադասավորություններ՝ ուժերի հավասարաչափ բաշխման նպատակով և այլն):

Ընդունելի համարելով հետաքննության և նախաքննության մարմինների հետ ամենօրյա աշխատանքներ տանելու, նրանց մշտապես աշխատանքային կարգով ուղղություններ տալու և նրանց գործունեությունը մշտապես հսկողության տակ պահելու վերաբերյալ դատախազների ներկայացրած պատճառաբանությունները՝ չպետք է մոռանալ, որ դատախազի աշխատանքի արդյունքների դրսևորման օրենքով սահմանված միակ կառուցակարգը հենց դատախազական ներգործության միջոցների կիրառման և դատախազական ակտերի կայացման գործընթացներն են, որի ուղղությամբ դեռևս անելիքներ կան:

Նախորդ հաշվետու ժամանակաշրջանների նման շարունակվում է ուշադրության կենտրոնում մնալ դատախազների կողմից վերլուծական աշխատանքի վարման և ՀՀ դատախազության կոլեգիայի առանձին որոշումներով պայմանավորված ամփոփումների կատարման վիճակը, որի կապակցությամբ արձանագրված թերություններն ու բացթողումները մշտապես քննարկվում են տարբեր մակարդակներով և արվում համապատասխան հետևություններ:

ՀՀ դատախազությունում հետևողական աշխատանքներ են տարվում ՀՀ Նախագահի 21.04.2009թ. N ՆԿ-59-Ն կարգադրությամբ հաստատված 2-րդ հավելվածի (Դատահիրավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագրից բխող միջոցառումների ցանկի)՝ ՀՀ դատախազությանը վերաբերող մասի պահանջների կատարման

շրջանակներում: Ներդրվել է ՀՀ դատախազության համակարգում վարվելիք վիճակագրական հաշվետվությունների կազմման և ներկայացման էլեկտրոնային (համակարգչային) համակարգը, ինչը զգալի կպարզեցնի և կհեշտացնի վիճակագրական տվյալների մուտքագրման, լրացման, ներկայացման, վերլուծման և ամփոփման աշխատանքները:

Վերը նշված գործընթացի շրջանակներում դատախազությունն ուսումնասիրել է միջազգային փորձը, ինչպես նաև համագործակցել Գերմանիայից հրավիրված քրեական հաշվառման և վիճակագրության ոլորտի փորձագետի հետ, որի եզրակացությունից բխող միջոցառումների իրականացումը շարունակվում է:

ՀՀ դատախազությունը, համագործակցելով ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ դատական դեպարտամենտի համապատասխան ծառայությունների հետ, վերահսկել և ապահովել է ՀՀ Նախագահի 21.04.2009թ. ՆԿ 59-Ն կարգադրությամբ հաստատված՝ «Դատահիրավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագրից բխող միջոցառումների» ցանկում նշված, 2009թ. և 2010թ. 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ դատախազության կողմից կատարման ենթակա մյուս միջոցառումների իրականացումը և 2010թ. 1-ին կիսամյակի արդյունքների վերաբերյալ համապատասխան հաղորդում է ուղարկել ՀՀ արդարադատության նախարարին: Համագործակցելով ՀՀ ԿԱ ոստիկանության, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համապատասխան ծառայությունների հետ՝ վերահսկել և ապահովել է ՀՀ Կառավարության 27.03.2008թ. N 1039-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրի միջոցառումների» ցանկի, 2009թ. և 2010թ. 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ դատախազության կողմից կատարման ենթակա համապատասխան միջոցառումների իրականացումը և 2010 թվականի 1-ին կիսամյակի արդյունքների վերաբերյալ համապատասխան հաղորդում է ուղարկել ՀՀ ԿԱ ոստիկանություն: Համագործակցելով իրավասու պետական մարմինների հետ՝ վերահսկել և ապահովել է ՀՀ Կառավարության 08.10.2009թ. N 1272-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թվականների ծրագրի միջոցառումների» ցանկում նշված, 2009թ. և 2010թ. 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ դատախազության կողմից կատարման ենթակա մի շարք միջոցառումների իրականացումը և այլն

ՀՀ և ԼՂՀ դատախազությունների միջև 09.12.2008թ. կնքված համագործակցության և փոխօգնության մասին համաձայնագիր-հուշագրի 1-ին հոդվածի 2-րդ մասի 9-րդ ու 10-րդ և 3-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ պարբերություններով ամրագրված գործընթացների՝ գործնականում իրականացման շրջանակներում, 2010թ. ապրիլի 16-18-ը ՀՀ գլխավոր դատախազի ղեկավարած պատվիրակությունն այցելել է ԼՂՀ-ի մայրաքաղաք Ստեփանակերտ, որտեղ հանդիպումներ է ունեցել ԼՂՀ-ի դատախազության անձնակազմի հետ:

Այցելության ընթացքում ԼՂՀ դատախազությանը տրամադրվել է 2009թ. և 2010թ. 1-ին եռամսյակի ընթացքում դատախազական լիազորությունների իրականացման և գործունեության կազմակերպման, ստուգումների կազմակերպման և անցկացման, մարդու իրավունքներին ու հիմնարար ազատություններին, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին, դատախազների կարգավիճակին և այլ համանման հարցերին վերաբերող իրավական, տեղեկատվական, մեթոդական, կազմակերպական փաստաթղթեր, ինչպես նաև մասնագիտական գրականություն (այսուհետ՝ նյութեր), անցկացվել են աշխատանքային խորհրդակցություններ ու քննարկումներ, որոնց ընթացքում տրվել են պարզաբանումներ՝ հիշատակված նյութերի բովանդակության, դրանք գործնականում կիրառելու և համապատասխան գործունեության ընթացքում օգտագործելու համար, ինչպես նաև ներկայացվել են դատահիրավական բարեփոխումների ներկա փուլում ՀՀ դատախազությունում իրականացվող կազմակերպական-կառուցվածքային բարեփոխումների ընթացքին ու ծագած հիմնախնդիրներին առնչվող հարցեր:

ՀՀ դատախազության և 100-ից ավելի հասարակակական կազմակերպությունների համագործակցության արդյունքում ՀՀ դատախազության ու հասարակական կազմակերպությունների միավորման համակարգող խորհրդի միջև 10.06.2010թ. ստորագրվել է համագործակցության վերաբերյալ հուշագիր:

<u>Միջազգային-իրավական օգնության</u> բնագավառում 2010թ. աշխատանք է կատարվել քրեական գործերով իրավական օգնության ցուցաբերման, ներառյալ՝ քրեական հետապնդման

կամ դատավճռի ի կատար ածման նպատակով հետախուզվող անձանց հանձնման, երկկողմ, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների շրջանակում համագործակցության և այլ ոլորտներում:

Ներպետական և օտարերկրյա իրավապահ մարմինների, ինչպես նաև ՀՀ-ում Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի ջանքերի ակտիվացման շնորհիվ մեծացել է այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից հետախուզվող և Հայաստանում հայտնաբերված անձանց թիվը:

2010թ. օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել և կատարումն ապահովելու նպատակով ՀՀ համապատասխան իրավապահ մարմիններին է ուղարկվել քրեական գործերով փոխադարձ իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ 95 (2009թ.՝ 79) միջնորդություն:

ՀՀ դատախազության ստորաբաժանումներից ստացված՝ փոխադարձ իրավական օգնություն հայցելու մասին թվով 49 (2009թ.՝ 53) միջնորդություն ուղարկվել է օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին:

2010թ. օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել և քննության է առնվել ՀՀ-ում հայտնաբերված՝ այլ պետության կողմից հետախուզվող անձանց հանձնման վերաբերյալ 27 (2009թ.՝ 95) միջնորդություն:

2010թ. ՀՀ տարածքում հայտնաբերվել է այլ պետության իրավապահ մարմինների կողմից հետախուզվող 165 (2009թ.՝ 157) անձ:

ՀՀ իրավապահ մարմինների կողմից հետախուզվող և այլ պետության տարածքում հայտնաբերված (կալանավորված) 82 անձի հանձնումը ապահովելու նպատակով, օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին են ներկայացվել միջազգային պայմանագրերի դրույթների համաձայն կազմված հանձնման մասին միջնորդություններ:

Քրեական հետապնդում իրականացնելու հանձնարարությամբ այլ պետությունների իրավապահ մարմիններին ուղարկվել է 23 (2009թ.՝ 28) քրեական գործ և նախապատրաստված նյութ:

Այլ պետության տարածքում կատարած հանցագործության համար Հայաստանում քրեական հետապնդման ենթարկելու միջնորդությամբ ստացվել է 17 քրեական գործ և նյութ (2009թ.՝ 31 քրեական գործ և նյութ):

2010թ. կազմակերպվել է այլ պետությունների դատախազությունների, իրավապահ այլ մարմինների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների ու պատվիրակություններ հետ շուրջ 50 հանդիպում ՀՀ գլխավոր դատախազի և գլխավոր դատախազի տեղակալների հետ:

Ապահովվել է ՀՀ գլխավոր դատախազի գլխավորած պատվիրակության մասնակցությունը Մոսկվայում կայացած ԱՊՀ մասնակից-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի հերթական նիստին:

2010թ. հոկտեմբերի 19-ից 21-ը Երևանում կայացել է Եվրոպայի գլխավոր դատախազների 5-րդ համաժողովը, որին մասնակցել է ԵԽ անդամ 33 պետության 60 ներկայացուցիչ: Նիստի ընթացքում ընդունվել է «Դատախազությունը և անչափահասների գործերով արդարադատությունը» երևանյան հռչակագիրը, ընտրվել են Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի նախագահ և բյուրոյի նոր անդամներ:

2010թ. սեպտեմբերի 15-ին Բուխարեստում ստորագրվել է Ռումինիայի գլխավոր դատախազության հետ համագործակցության ակտիվացման մասին Հուշագիրը:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի գլխավորած պատվիրակությունը 2010թ. նոյեմբերին մասնակցել է Մակաոյում կայացած հակակոռուպցիոն կառույցների հանդիպմանը:

Նկատի ունենալով, որ նախկին ծրագրով նախատեսված միջոցառումները հաջողությամբ իրականացվել են, 2010թ. սեպտեմբերի 15-ին Մոսկվա քաղաքում ՀՀ և ՌԴ գլխավոր դատախազները ստորագրել են ՌԴ և ՀՀ գլխավոր դատախազությունների միջև 2010-2011թթ. համագործակցության նոր ծրագիր, որով նախատեսված առաջին միջոցառումը արդեն իսկ կայացել է Մոսկվա քաղաքում, 2010թ. դեկտեմբերին:

<u>ՀՀ դատախազությունն իրավական ապահովման ոլորտում</u> իրականացրել է տարբեր իրավական ակտերի կատարելագործմանն ուղղված միջոցառումների մշակման աշխատանքներ:

2010թ. մշակվել են դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի նախագծեր, որոնց նպատակն է կատարելագործել ՀՀ օրենսդրությունը և բարելավել ՀՀ դատախազության գործունեությունը: Այդ նպատակով մշակվել է 27 (2009թ.՝ 8) օրենսդրական ակտի նախագիծ: Այդ թվում՝ նախապատրաստվել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագիծն ընդունվել է ՀՀ Կառավարության նիստում և, որպես ՀՀ Կառավարության նախաձեռնություն, պաշտոնապես ներկայացվել Ազգային ժողովի քննարկմանը: Մշակվել են «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնք ներկայացվել են ՀՀ արդարադատության նախարարին՝ պետական փորձագիտական եզրակացության: Մշակվել է նաև «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն ուղարկվել է ՀՀ ֆինանսների նախարարին և ՀՀ ոստիկանապետին՝ կարծիք ստանալու համար: Մշակվել են «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Զինապարտության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնք ներկայացվել են ՀՀ վարչապետին:

ՀՀ Նախագահի 2009թ. ապրիլի 21-ի «Դատահիրավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագիրը և դրանից բխող միջոցառումների ցանկը հաստատելու, ինչպես նաև աշխատանքային խումբ ստեղծելու մասին» N ՆԿ-59-Ն կարգադրության հավելված 2-ով հաստատված միջոցառումների ցանկի 5.1 կետի պահանջները կատարելու նպատակով, 2010 թվականի ընթացքում մշակվել է ««Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 3 նախագիծ: Դրանք այնուհետև միավորվել և դրվել են ներքին շրջանառության մեջ՝ կարծիքներ ստանալու համար:

Մշակվել են նաև մի շարք այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծեր, որոնք գտնվում են մշակման տարբեր փուլերում:

2010թ. իրավական ակտերի (ՀՀ օրենքի, կառավարության որոշման) նախագծեր են ստացվել տարբեր պետական մարմիններից, այդ թվում՝ 30 իրավական ակտի նախագիծ՝ ՀՀ արդարադատության նախարարությունից (2009թ.՝ 35), 12-ը՝ ՀՀ ոստիկանությունից (2009թ.՝ 2), 9-ը՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունից (2009թ.՝ 0), 5-ը՝ ՀՀ առողջապահության նախարարությունից (2009թ.՝ 1) և ՀՀ Կենտրոնական բանկից (2009թ.՝ 0), 4-ը՝ ՀՀ Ազգային անվտանգության խորհրդից (2009թ.՝ 6), 3-ը՝ ՀՀ Կառավարության աշխատակազմից (2009թ.՝ 11), 2-ը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունից (2009թ.՝ 0), 1-ական՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից (2009թ.՝ 2), ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (2009թ.՝ 2) և ՀՀ պետական եկամուտների կոմիտեից (2009թ.՝ 0), ՀՀ արտաքին գործերի նախարարությունից (2009թ.՝ 1), ՀՀ սփյուռքի նախարարությունից (2009թ.՝ 0), ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունից (2009թ. 3), Մարդու իրավունքների պաշտպանից (2009թ.՝ 0), ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունից (2009թ.՝ 0) և ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի վարչությունից (2009թ.՝ 0):

<u>Անձնակազմի հետ տարվող աշխատանքների ոլորտում</u> **<u>ՀՀ դատախազությունը</u>** 2010թ. դատախազության համակարգի աշխատակիցների վերաբերյալ նախապատրաստել և ՀՀ գլխավոր դատախազի ու նրա տեղակալների ստորագրմանն է ներկայացրել 708 հրամանի նախագիծ, որոնցից 422-ը՝ արձակուրդի, իսկ 99-ը՝ գործուղման վերաբերյալ:

2011թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ դատախազությունն ունեցել է 337 հաստիքային միավոր: 2010թ. աշխատանքի է ընդունվել 15 աշխատակից: 2011թ. հունվարի 1-ի դրությամբ թափուր է եղել 4 հաստիք: ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով 42 (2009թ.՝ 61) աշխատակից տեղափոխվել է տարբեր պաշտոնների: 11 աշխատակից ազատվել է աշխատանքից:

2010թ. անցկացվել է ՀՀ դատախազության աշխատակիցների որակավորման հանձնաժողովի 17 նիստ: Լսվել է 58 աշխատակցի գնահատագիր, որոնցից 48-ի նկատմամբ կայացվել է զբաղեցրած պաշտոնին համապատասխանելու վերաբերյալ որոշում, 3-ի նկատմամբ՝ դատախազների առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, 7-ի նկատմամբ՝ համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ լրացուցիչ վերապատրաստում անցնելու պայմանով:

2010թ. կազմվել և ՀՀ գլխավոր դատախազի ստորագրմանն են ներկայացվել խրախուսման վերաբերյալ մի շարք հրամանների նախագծեր, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազի կողմից միջնորդություններ՝ ՀՀ Նախագահին, Վարչապետին և այլ գերատեսչական կառույցների ղեկավարներին՝ մի շարք աշխատակիցների խրախուսելու վերաբերյալ:

2010թ. հերթական դասային աստիճան է շնորհվել 48 աշխատակցի:

2010թ. «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ում վերապատրաստման դասընթացի է մասնակցել 265 դատախազ, որոնցից 2-ը, համաձայն կարգի 75-րդ կետի, անցել են կրկնակի վերապատրաստում:

Դատախազության համակարգի ղեկավար կազմի տարեկան վերապատրաստման շրջանակներում վերապատրաստվել է 46 դատախազ, իսկ սեմինար-քննարկումներին չներկայանալու պատճառով վերապատրաստումը չանցած է համարվել 6 մասնակից:

ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի եզրակացությամբ և ՀՀ գլխավոր դատախազի որոշմամբ 2010թ. լրացուցիչ վերապատրաստման ենթակա դատախազներից լրացուցիչ վերապատրաստումն անցել է 2 դատախազ, իսկ դասընթացներին չներկայանալու պատճառով վերապատրաստումը չանցած է համարվել 1 դատախազ:

Կազմակերպվել է տարբեր բուհերի 62 ուսանողի արտադրական պրակտիկայի անցկացումը ՀՀ դատախազության ստորաբաժանումներում:

2010թ. աշխատանքներ են կատարվել <u>**ՀՀ դատախազությունում ստացված դիմումներն ու բողոքները**</u> սահմանված ժամկետում քննարկելու, դիմումների քննարկման արդյունավետությունը բարձրացնելու, տեղ գտած թերություններն ու խախտումները վերացնելու, ինչպես նաև քաղաքացիների ընդունելությունը բարելավելու ուղղությամբ:

2010թ. ՀՀ դատախազությունում ստացվել է 10288 (2009թ.՝ 5115) դիմում-բողոք, որոնցից 1967-ը (2009թ.՝ 1193) եղել է կրկնակի, բավարարվել է 530-ը (2009թ.՝ 373), մերժվել է 711-ը (2009թ.՝ 359), ուղարկվել է այլ մարմին 3478-ը (2009թ.՝ 1727), 23 անանուն դիմում առանց քննարկման է թողնվել, անավարտ է մնացել 141-ը (2009թ.՝ 73):

ՀՀ գլխավոր դատախազությունում կազմակերպվել է 2575 (2009թ.՝ 1072) քաղաքացու ընդունելություն, որոնցից ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների մոտ ընդունելության է ներկայացել 178 (2009թ.՝ 118) քաղաքացի, դրանցից 25-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի մոտ, 37-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների մոտ, 116-ը (2009թ.՝ 60)՝ ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների մոտ՝ ըստ հանցատեսակների, 64-ը (2009թ.՝ 44)՝ ՀՀ գլխավոր դատախազության քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման բաժին և այլն:

Ի կատարումն ՀՀ գլխավոր դատախազի 01.08.2007թ. N 53 հրամանի՝ 13.07.2004թ. N 277 հրամանում փոփոխություն կատարելու վերաբերյալ պահանջի՝ ընթացք է տրվել նաև բռնադատվածների վերաբերյալ դիմումներին, որի կապակցությամբ մուտքագրվել է ընդհանուր հաշվով 67 քաղաքացու 75 դիմում, որոնցից 8-ը՝ կրկնակի (2009թ.՝ 54 քաղաքացու 57 դիմում, որոնցից 3-ը կրկնակի): 23-ի (2009թ.՝ 26) խնդրանքը բավարարվել է, նրանց տրվել է բռնադատված լինելու վերաբերյալ տեղեկանք, իսկ 30 (2009թ.՝ 11) դիմումով խնդրանքը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ տվյալ անձի կարգավիճակը չի բխում 14.06.1994թ. «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պահանջներից, 22 դիմումով տրվել է պարզաբանում:

Ընդունելության ներկայացած քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ տրվել են պատշաճ պարզաբանումներ, դիմումներն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներ կամ այլ մարմին՝ ըստ ենթակայության ընթացքը լուծելու և քաղաքացիներին պատասխանելու համար:

2010թ. ՀՀ հատուկ քննչական ծառայության մասով <u>**ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազներն**</u> իրականացրել են ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթում քննված 214 (2009թ.՝ 198) քրեական գործ, քրեական գործի նկատմամբ դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում, որոնցից 37-ը փոխանցվել է նախորդ ժամանակաընթացից, 177-ը ընդունվել է վարույթ հաշվետու ժամանակաընթացում:

Վարույթում քննված քրեական գործերից 89-ը՝ 165 անձի նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2009թ.՝ 71 գործ, 125 անձ): Կարճվել է 25 (2009թ.՝ 35)

քրեական գործ, 10 քրեական գործի նախաքննությունը կասեցվել է, 10-ը միացվել է վարույթում եղած քրեական գործերին, 49-ը ուղարկվել է ըստ ընդդատության, 31 քրեական գործ անավարտ է մնացել:

2010թ. հատուկ քննչական ծառայությունում 166 հաղորդումով նախապատրաստվել են նյութեր, որոնցից 35-ով հարուցվել են քրեական գործեր, 92-ով քրեական գործի հարուցումը մերժվել է, 14-ն ուղարկվել է այլ մարմին՝ ըստ ընդդատության, 12-ը ստուգման փուլում է:

Ավարտված քրեական գործերով պատճառված 62 893 437 դրամ վնասից նախաքննության ընթացքում ռեալ վերականգնվել է 33 460 000 դրամ կամ 53,2% տոկոսը:

Վարույթում եղած քրեական գործերից 122-ը վերաբերել են իրավապահ մարմինների աշխատակիցների կամ նրանց հանցակցությամբ կատարած հանցագործություններին, որոնցից 69-ը՝ 126 անձի նկատմամբ, ուղարկվել է դատարան, կարճվել է 20-ը, կասեցվել՝ 3-ը, միացվել՝ 8-ը, 22-ը մնացել է անավարտ, այդ թվում՝ 64-ը վերաբերել է Ոստիկանությանը, 22-ը՝ քրեակատարողական հիմնարկներին, 16-ը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին, 9-ը՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը, 6-ը՝ ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայությանը, 5-ը՝ ԴԱՀԿ ծառայությանը:

«Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ դպրոց) 2010թ. ուսուցման և որակավորման բարձրացման դասընթացների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման բնագավառում իրականացրել է դատախազների տարեկան վերապատրաստում, որի շրջանակում ընդգրկված է եղել 319 դատախազ, որոնցից վերապատրաստումը չեն անցել 6-ը:

ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի եզրակացությամբ և ՀՀ գլխավոր դատախազի որոշմամբ 2010թ. լրացուցիչ վերապատրաստման ուղեգրված 3 դատախազից վերապատրաստում չի անցել 1-ը:

Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 32 անձից մասնագիտական պատրաստում չի անցել 1-ը:

2010թ. վերապատրաստման ցուցակում ընդգրկված ՀՀ դատախազության աշխատակազմի բոլոր 37 պետական ծառայողները վերապատրաստում են անցել:

Կրթական ծրագրերով նախատեսված ուսումնական գործընթացներն իրականացվել են դասախոսությունների, գործնական պարապմունքների, դասախաղերի, դատախաղերի, սեմինարների, խնդիրների հիման վրա քննարկումների, բանավեճերի, ինչպես նաև Եվրոպական դատարանի վճիռների, Վճռաբեկ դատարանի որոշումների քննարկումների միջոցով: Դասընթացներն անցկացվել են ինչպես դպրոցի աշխատակիցների, այնպես էլ ժամավճարային կարգով վերապատրաստման դասընթացներին որպես դասախոսներ ներգրավված տարբեր հաստատություններում դասավանդող իրավաբան-մասնագետների և դատախազության փորձառու աշխատակիցների կողմից:

Դպրոցն ապահովել է ժամանակակից գիտատեխնիկական և դասավանդման մեթոդների կիրառմամբ կրթական ծրագրերի իրականացումը:

Հաշվետու ժամանակահատվածում դպրոցը պայմանագրային հիմունքներով իրականացրել է այլ կրթական գործունեություն, մասնավորապես, ի կատարումն դպրոցի և ԼՂՀ դատախազության միջև 16.02.2010թ. կնքված վերապատրաստման ծառայություններ մատուցելու մասին պայմանագրի, անցկացվել է ԼՂՀ դատախազների և քննիչների տարեկան վերապատրաստում և ԼՂՀ դատախազների ու քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված հավակնորդների մասնագիտական պատրաստում, իսկ ի կատարումն դպրոցի և ՀՀ հատուկ քննչական ծառայության միջև 15.02.2010թ. կնքված վերապատրաստման ծառայություններ մատուցելու մասին պայմանագրի, անցկացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության գլխավոր և առաջատար պաշտոններ զբաղեցնող ծառայողների պարտադիր վերապատրաստում:

Հաշվետու ժամանակահատվածում դպրոցը տարեկան վերապատրաստում անցնող դատախազների, դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց, ԼՂՀ դատախազների և քննիչների, ԼՂՀ դատախազների և քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված հավակնորդների, ինչպես նաև ՀՔԾ ծառայողների ուսումնառության շրջանակներում, մշակել և հրատարակել է «Խոշտանգումների մասին հաղորդումների քննարկումը, եվրոպական չափանիշները, երաշխիքները և չափորոշիչները» և «Պաշտոնեական հանցագործությունների

հիմնական տեսակների քրեաիրավական և քրեագիտական վերլուծություն» խորագրով գիտագործնական ձեռնարկները, «Կառավարման հոգեբանություն» ուսումնական ձեռնարկը, «Դատախազական հսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ» խորագրով ձեռնարկը և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում դպրոցը համագործակցել է միջազգային հեղինակավոր կառույցների և փորձագետների հետ, որի արդյունքում իրականացվել են մի շարք միջոցառումներ և ծրագրեր:

Ներկայումս դպրոցում աշխատանքներ են տարվում վերապատրաստման գործընթացների ընդլայնման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Նախատեսվում է շարունակել ուսումնական ձեռնարկների կազմման և հրատարակման աշխատանքները, ինչպես նաև դպրոց ներմուծել ուսուցման նոր մեթոդներ ու միջոցներ: Միևնույն ժամանակ կատարվում են աշխատանքներ՝ դպրոցի զարգացման ծրագրին համահունչ նախատեսված միջոցառումները կյանքի կոչելու ուղղությամբ:

Դատախազության 2010 թվականի գործունեության արդյունքները քննարկվել և ամփոփվել են Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի 2011 թվականի փետրվարի 11-ի նիստում, որին մասնակցել են ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալը, ՀՀ քննչական ծառայությունների և վարչությունների պետերը, իսկ Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազությունների աշխատանքի արդյունքները՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի և նրա տեղակալների մասնակցությամբ անցկացված խորհրդակցություններում, որտեղ նշվել են դատախազության գործունեության ընթացքում տեղ գտած բացթողումներն ու թերությունները և դրանց վերացման, ինչպես նաև աշխատանքի արդյունավետության հետագա բարձրացման ուղղություններն ու միջոցառումները:

Հավաստիացնում եմ, որ շարունակելով իրականացնել օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունները, Հայաստանի Հանրապետության դատախազությունը կանի հնարավորինս՝ հանրապետությունում օրինախախտումների դեմ տարվող պայքարին, սահմանադրական և հասարակական կարգի ամրապնդմանն օժանդակելու, պետության, ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու, ինչպես նաև օրինականության պահպանմանն առնչվող սահմանադրական լիազորություններից բխող մյուս խնդիրներն իրականացնելու ուղղությամբ: Միաժամանակ, բացահայտելով դատախազական լիազորությունների իրականացման և գործունեության կազմակերպման աշխատանքում տեղ գտած թերություններն ու բացթողումները, կարվեն դրանցից բխող համապատասխան հետևություններ՝ հետագա աշխատանքների արդյունավետությունն առավելագույնս ապահովելու համար:

Հարգանքով՝

Ա.ՀՈՎՍԵՓՅԱՆ